



ՍԱՌՆԱՐԱՆԻ ԳՅՈՒՄՆԵՐԸ

Անցյալ տարվա վերջին Ֆրանսիայում մեծավ Շարլ Թելիեն՝ «ցրտության հայրը»: Դա մի անգամ ևս ապացուցեց, որ կապիտալիստական աշխարհում մեծ գյուտարարները հարստության աղբյուր են ստեղծում կապիտալիստների համար, բայց իրենք բաժին չունեն դրանից: Շարլ Թելիեն մեծանկիս միայն մի ֆանի հարյուր ֆրանկ ուներ, մինչդեռ կապիտալիստներն աշխարհի բոլոր երկրներում, կազմակերպելով նրա ստեղծած ստանդարտների արտադրությունը, վաստակել և վաստակում են հարյուրավոր միլիոններ: Ձկարծե՛ք փոխարենը նա ի՞նչ կյանքում մեծ փառքի կամ պատվի արժանացավ: Ո՛չ, ամենևին: Ճիշտ է, նրան շնորհվեց «Պատվո լեգիոնը» շքանշան, բայց մեծանկիս ընդամենը մի ֆանի ամիս առաջ:

«Սյանա է վի»

ԻՆՉՊԵՍ «ԵԱՐԵՆԻ» ՎԻՐՈՒՄՆԵՐԻՆ

Գիտնականները վիճարկում են հիվանդությունների դեմ պայքարելու մի հնարամիտ միջոց են առաջարկում: Վիրուսներին «հրամցվում է» մի պրեպարատ, որն այնքան նման է կյանքի համար անհրաժեշտ որևէ նյութի, որ նրանք սխալվում և «ուռում» են այն: Դրանից հետո վիրուսների մոտ դադարում է նյութափոխանակությունը, և նրանք ոչնչանում են:

Նյութափոխանակությունը (մետաբոլիզմ) դադարեցնող նյութերը կոչվում են հակամետաբոլիտներ: Միկրոբների համար դրանք վաղուց են գտնված (պենիցիլին և մյուս հակաբիոտիկները): Բայց վիրուսներին «խաբելու» ընդունակ նյութեր հաջողվեց գտնել միայն վերջերս:

Ախտահարույց վիրուսների դեմ պայքարե-

լու համար ամերիկյան գիտնականները կիրառել են մի նյութ, որը նյութափոխանակությունից հանում է վիրուսներին անշափ անհրաժեշտ տիմինը և ուրիդինը:

Երե բազմակողմանի ստուգումը հաստատի նախնական հետազոտությունները, ապա հնարավոր է, որ բժշկներն ստանան վիրուսային հիվանդությունների դեմ պայքարի մի այնպիսի հզոր զենք, ինչպիսին հակաբիոտիկներն են՝ ախտահարույց միկրոբների դեմ:

«Զնանիե սիլա»

ԹՂԹԵ ՍՂՈՅ

Մամլած քաղբը նոր կիրառություն է ստանում: Անգլիացի մի արդյունաբերող ստվարաբորից պատրաստում է շրջապողներ: Այդ սղոցները կօգտագործվեն ատաղձագործական նուրբ շինվածքների համար անհրաժեշտ փայտեղենը կտրելու, նուրբ փայտյա բերքիկներ սղոցելու համար և այլն: Թղթն սղոցների որակն ավելի բարձր է, քան լավագույն պողպատներից պատրաստված սղոցներինը:

«Սյանա է վի»

ՏՈՐՁԸ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՀԻՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԵՄ

Լեն գիտնականների հետազոտությունները ցույց են տվել, որ տոբի մեջ պարունակվող որոշ օրգանական միացություններ պաշտպանում են ռենտգենյան ճառագայթներից: Տոբի տարալուծումից ստացված նյութերը տրվել են մկներին և ճագարներին՝ ճառագայթումից կես ժամ առաջ: Դրանից հետո կենդանիները առանց հետևանքի դիմացել են մահացու դոզայով ռադիոակտիվ ճառագայթմանը: Դեռ վաղ է խոսել այդ հետազոտությունների վերջնական արդյունքների մասին, բայց նրանք ապագայում կհանգեցնեն ճառագայթային հիվանդության դեմ նոր դեղորայքի հայտնագործմանը:

«Տեխնիկա մոլոդյոժի»

«ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱԿԱՆՋ»

Հունգարական գեոֆիզիկոս, դոկտոր Լասլո Բենդեֆի ստեղծած «էլեկտրական ականջ» ընդունակ է լսելու երկրի ընդերքի «շշուկը»: Այդ ցածր ձայնն առաջանում է լեռնային ապարների շեռտերի շփումից, երբ դրանք շարժվում են:

Հանքահորում տեղակայված կամ հորատանցքի իջեցված նոր սարքերն օգնում են

ստորերկրյա ցեցումից մի ֆանի ժամ առաջ կանխագուշակել երկրաշարժը, որոշել նրա ուժն ու էպիկենտրոնը:

ՏԱՍՍ

ԶՐԱՅԻՆ ՉՄՈՒՇԿՆԵՐ

Այսպիսի շմուշկներ փորձարկվում են Արևմտյան Գերմանիայում: Փորձարկումները ցույց են տվել, որ այդ շմուշկները կարելի է օգտագործել ոչ միայն սպորտային, այլև բազմաթիվ այլ գործնական նպատակներով:

«Մյանա է վի»

ՆԵԿԱԿԱՎԱՐՈՒՄ

Այսպես է կոչվում այն սարքը, որի օգնությամբ կարելի է անելու վայրում ստանալ ջուր, միանգամայն պիտանի՝ խմելու, ակումուլյատորների լցավորման և այլ նպատակների համար: Այն ստեղծել են Ճապոնիայում:

Ջուր ստանալու սարքը առտաֆինից նման է վրանի: Այն պատրաստված է բափանցիկ պոլիմերային բաղաձրից: Արևից տաքացած հողը զօրաբացնում է ջուրը, որն առկա է նույնիսկ ամենաչոր հողում: Նստելով բաղաձրին ջրի կաթիլները հոսում են ցիստեռնի մեջ: Արևոտ օրվա ընթացքում յուրաքանչյուր ֆառակուսի մետրից կարելի է ստանալ մոտ մեկ լիտր թուրք ջուր:

«Ջնանիե սիլա»

ԹԱՔՅՐԱՄ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

Անակնկալ հարստությունը կարող է շատ անհանգստություններ պատճառել: Դրա փայլուն ապացույցը Հոլանդիայի բնական գազի և նավթի հետախույզման աշխատանքները դեկավարող «Նեդերլանդսե ասոցիացիան» («ՆԱՄ») ֆիրմայի օրինակն է: Ֆիրման հայտնաբերել է բնական գազի ամենախոշոր հանքավայրը Եվրոպայում, սակայն մինչև այժմ այն օգտագործելու իրավունք չի ստացել, որովհետև դա կարող էր վնաս հասցնել Երկրի էներգետիկային:

Հոլանդական հայտնագործությունները սենսացիա առաջացրին: Ամենուրեք, հոլանդական հանքավայրին մոտ գտնվող շրջաններում Արևմտյան Գերմանիայում, Անգլիայում, Դանիայում և այլ երկրներում սկսվեցին երկրաբանական որոնումները: Ենթադրվում է, որ Հյուսիսային Հոլանդիայի ընդերքում բաժնված է մոտ 800 միլիարդ խորանարդ մետր բնական գազ:

Ֆիրման երկար ժամանակ լուրս էր իր խոշոր հայտնագործության մասին: Առաջին զգույշ հաղորդումներն ստացվեցին միայն 1960 թվականին, քնն հորատումն սկսվել էր դեռևս 1955 թվականին:

«Ապագայի խոշոր գազային արվարձանում» Գրոնինգենում արված առաջին հայտնագործությունները գազի այնքան մեծ պաշարներ արձանագրեցին, որ կարելի է արդեն կանխատեսել, քե էներգիայի այդ շափազանց էժան աղբյուրն ինչպիսի վնաս կարող է հասցնել Հոլանդիայի էներգետիկային:

Դուցե այդ է պատճառը, որ «ՆԱՄ» ֆիրմային արգելված էր ինքնակամ օգտագործել իր գազը: Ֆիրման տարիներ շարունակ նստել էր միլիարդների արժեք էներգայացնող հարստության վրա և չէր կարողանում օգտագործել այն: Միայն անցյալ տարվա ամռանը վերսկսվեցին հորատման աշխատանքները, որպեսզի մոտ ապագայում անցնեն հանույրին:

Հյուսիսային ծովի ափին գազի այդ հսկայական պաշարների առաջացումը դեռևս պարզաբանված չէ: Մինչև այժմ այն կարծիքն է եղել, քե բնական գազը ծովի հատակի նրստվածքների ֆայայաման արդյուն է: Իսկ այժմ որոշակի նախանշաններ կան, որ Հյուսիսային Հոլանդիայի բնական գազը կարող է առաջացած լինել ածխից:

«Էլտ ամ զոնետագ»

ԽՐԱԶԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստանֆորդի (ԱՄՆ) համալսարանի նեյրոֆիզիոլոգիայի բժշկական դպրոցի դոկտոր Ուիլյամ Դեմենտն առաջ է ֆաշել Երազատեսության պատճառների մի նոր տեսություն, որի համաձայն Երազը կարող է առաջանալ կենտրոնական նյարդային համակարգության կողմից օրվա ընթացքում բնականորեն արտադրվող բույնի էներգործությունից, որից օրգանիզմն աշխատում է ազատվել զիշերը:

Դոկտոր Դեմենտի տեսությունը տարբերվում է Երազատեսության պատճառների մյուս բոլոր բացատրություններից նրանով, որ առաջին անգամ Երազի առաջացման պատճառը համարում է յուրահատուկ ֆիմիական նյութը:

Սակայն այն էներգությունը, որ Երազներն ունեն ավելի շուտ ֆիզիոլոգիական, քան հոգեբանական հիմք չի հակադրվում Երազի ժամանակակից հոգեբանական-վերլուծական բացատրություններին:

Երկու կամավորների վրա կատարվել են

երազատեսությունը վերացնելու փորձեր: Երազատեսության մոտենալը, որն արտաքինից արտահայտվում է աշխարհի արագ շարժումներով, ամեն անգամ կանխվել է: Երկրորդ շարքավա վերջին կամավորների մոտ նկատվել են նոգեկան խանգարման նշաններ:

Այսպիսով երազատեսության կանխումը տվեց որոշակի էֆեկտ, բայց՝ երազի բնության մասին ոչինչ չպարզեց:

Հաջորդ գիշերների ընթացքում, երբ կամավորներին բույլատրվում էր բնական և երազներ տեսնել, երազատեսության տևողությունը երկարել է այնքանով, որքան ժամանակ որ նրանց զրկել էին այդ հեռավորությունից:

Այդ նկատվել է նաև տաս այլ անհատների մոտ, որոնց երեքից յոթ գիշեր զրկել էին երազներ տեսնելու հեռավորությունից:

«Նյու-Յորք Թայմս»

ԼԵՌ՝ ՄՈՎԻ ՀԱՏԱԿՈՒՄ

Ընդունված է կարծել, թե աշխարհագրական հայտնագործությունների ժամանակաշրջանն ավարտվել է: Մինչդեռ դա այդպես չէ: Վերջերս «Վոյեկով» հիդրոմետերոլոգիական հետախուզական ճաշի վրա աշխատող սովետական գիտնականները Խաղաղ օվկիանոսի կենտրոնական մասում հայտնաբերեցին մի ամբողջ լեռ՝ մոտ հինգ կիլոմետր բարձրությամբ: Անոր գտնվում է օվկիանոսի հատակում: Միայն 26 մետր է մնում, որ նրա գագաթը հասնի ծովի մակերեսվայրին:

«Սովետսկի Սոյուզ»

ԱՎՏՈՄԱՏ ՔՆՆՈՂ

Մոսկվայի էներգետիկ ինստիտուտի ուսանողներն ստեղծել են ավտոմատ բննոր: Սարբ տալիս է մի քանի հարց և ամեն անգամ առաջարկում հինգ պատասխան: Սարբը գնահատական է նշանակում ելնելով պատասխանների ճիշտ բնութագրությունից: Դասախոսները չեն վերավորվում իրենց մեխանիկական «կոլեգայից»: Չէ որ նա հաջողությամբ է կատարում իր պարտականությունները, օգնելով ուսանողներին ըստուգելու իրենց գիտելիքները անցած բնամենքից:

«Սովետսկի Սոյուզ»

ԿԱՐՃԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՀԱՆՁՈՒՄ Է

Լյուրիների ակնաբուժական կլինիկայի պրոֆեսոր Թադեոզ Կրվալիշը մշակել է վիրահատման միջոցով կարճատեսությունը վերացնելու մեթոդ:

Ընդհանուր գծերով մեթոդի էությունը նետալան է, աշխի եղջերաքաղանքի վրա քերական կտրվածք են անում, ապա շերտատում եղջերաքաղանքը և նրա ներքին շերտից կտրում անշան մի կտոր 1 սմ հաստությամբ: Այնուհետև նախօրոք մետաքսյա քելով ձգած եղջերաքաղանքի վերին շերտը կիպ դնում են իր տեղը: Նրա մակերեսին առաջնում է հազիվ նկատելի փոսիկ: Նախկինում կարճատես աշխի տեսնում է նորմալ կերպով: Պրոֆեսոր Կրվալիշը արդեն մի քանի վիրահատություն է կատարել (նա վիրահատել է միայն այն հիվանդներին, որոնք տառապել են մի աշխի կարճատեսությամբ):

«Նաուկա ի ժիզն»

ԷԼԵԿՏՐԱԶՈՍԱՆՔԸ ՀԱՆԱՊԱՐՀ Է ՅՈՒՅՅ
ՏԱԼԻՍ ԶԿՆԵՐԻՆ

Գաղտնիք չէ, որ հիդրոկայանները և գետերի վրա եղած տեխնիկական մյուս կառույցները սպառնում են ձկների գոյությանը և արգելիք հանդիսանում ձկնորսման վայրեր գտնելու համար նրանց որոնումներին: Պահպանիչ ցանցը չի ապահովում ձկների անհրաժեշտ անվտանգությունը: Ընկնելով տուրբինների մեջ ձկները վիրավորվում են և հաճախ ոչնչանում: Առավել էֆեկտիվ է համարվում վերջերս Հոլանդիայում կիրառվող էլեկտրական պարասպապատումը: Այն բույլ չի տալիս ձկներին մտնել վտանգավոր գոտի և ուղղում է նրանց դեպի անցումնային տեղերը:

Էլեկտրապարիսպն իրենից ներկայացնում է ափից-ափ ձգված մետաղյա ճապան, որից կախված են երկարյա ցինկապատված քիթերներ: Այդ ճապանը նաև էլեկտրակաթել է: Նրանով անցնում է հոսանք: Քիթեղյա էլեկտրոդները փոխարեն կարելի է կիրառել նաև ուրիշ տեսակներ, օրինակ, ցեմենտով լցված խողովակներ: Հոսանքը տրվում է իմպուլսներով, բնական է, այնպիսի հզորության, որ ձկները չըխրվանան:

«Նաուկա ի ժիզն»